

Է.

Հերձուածող Մաթիկը, հիմա լաւ չեմ յիշեր, 1900ին քանի տարեկան կրնար ըլլալ: Հասունութիւնը, դէմքին գիծերուն փաստը, յոգնութիւնը կ'ընէին սակայն զգալի, թէ երիտասարդութեան առջի կրակները իջած էին քիչ մը: Երեսունին մօտիկ, կամ քիչ մը անդին: Ստոյգ էր սակայն, որ անցեր էր սահմանը չորս տարի առաջ, ինչ որ դէպքերու լեզուով կը նշանակէ Մաթիկ մը, հայոց աշխարհին վրայ, ԳԾԻ ջարդերէն անմիջապէս ետք, երբ հրդեհուած գիւղերն ու քաղաքները դեռ չէին գտած իրենց կերպարանքը ու մեր ժողովուրդը սկիզբը ըրած էր իր պատմութեան ամէնէն սեւ արհաւիրքներէն մէկը, ցայգալոյս անունով յորջորջուած: Մաթիկ Մելիքիսանեանը սակայն անբաւական կը նկատեմ լրիւ խորհրդանշելու համար մարդերը, որոնք մեռան Այաշի բանտէն դուրս, Տիգրանակերտի ճամբուն վրայ: Ներկայ վէպը («Մնացորդաց»ի Դժոխքը) պիտի գտնէ այդ մարդերը իրենց նահատակութեան խորանին, շղթայակապ, մահուան հսկումէն առաջ, դատելու իրենք զիրենք, իրենց ժողովուրդը, որուն ճակատագիրը թերեւս խնայուեցաւ իրենց մահապարտի վերջին ըրոպէներուն, թէեւ ուրիշ տեղեր թուրքերը մահէն առաջ այդ անպատում վայելքն